

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2008 թվականի հունվարի 25-ի

ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ձգտելով ստեղծել Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք եւ ապահովել բարենպաստ պայմաններ Մաքսային միության արդյունավետ գործունեության համար,

հաշվի առնելով խտրականության բացառման, թափանցիկության, փոխշահավետության եւ ազգային շահերի պաշտպանության սկզբունքների վրա հիմնված հետեւողական արտաքին քաղաքականության անհրաժեշտությունը,

ձգտելով ստեղծել սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետություններից (այսուհետ՝ երրորդ երկրներ) ապրանքների ներմուծման միասնական կարգ Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածքներ եւ Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք (դրա ստեղծումից հետո) եւ այդ տարածքներից ապրանքների արտահանման համար,

հաշվի առնելով երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների անհրաժեշտությունը,

ղեկավարվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Հիմնական հասկացությունները

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«արտաքին առևտրային գործունեություն»՝ ապրանքների արտաքին առևտրի ոլորտում գործարքների իրականացմանն ուղղված գործունեություն,

«ապրանքների արտաքին առևտուր»՝ ապրանքների արտահանում եւ (կամ) ներմուծում: Ապրանքների տեղափոխումը Կողմ հանդիսացող պետության մաքսային տարածքի մի հատվածից մյուսը, եթե այդ հատվածները կապված չեն միմյանց հետ ցամաքային տարածքով, ինչպես նաեւ օտարերկրյա պետության մաքսային տարածքով, ապրանքների արտաքին առևտուր չի համարվում,

«միասնական մաքսային տարածք»՝ Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածքներից բաղկացած տարածք,

«ապրանքի ներմուծում»՝ ապրանքի ներսերումը Կողմ հանդիսացող պետության մաքսային տարածք կամ միասնական մաքսային տարածք երրորդ երկրների մաքսային տարածքներից՝ առանց հետադարձ դուրսհանման պարտավորության,

«ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք»՝ ապրանքների առանձին տեսակների մասով արտաքին առևտրային գործունեության իրականացման իրավունք, որը շնորհվում է գործադիր իշխանության պետական լիազոր մարմնի կողմից տրվող լիցենզիայի հիման վրա,

«արտահանման եւ (կամ) ներմուծման քանակական սահմանափակումներ»՝ ապրանքների արտաքին առևտրի քանակական սահմանափակմանն ուղղված միջոցներ, որոնք կարող են ներդրվել քվոտաների սահմանման միջոցով,

«լիցենզիա եւ (կամ) թույլտվություն»՝ ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման իրավունքի վերաբերյալ հատուկ փաստաթղթեր,

«լիցենզավորում»՝ վարչական միջոցների ամբողջություն, որոնցով սահմանվում է լիցենզիայի եւ (կամ) թույլտվության տրամադրման կարգը,

«ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման դիտարկում»՝ ժամանակավոր միջոց, որը սահմանվում է ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման դինամիկան վերահսկելու նպատակով (ավտոմատ լիցենզավորում),

«թույլատրման կարգ»՝ ապրանքների առանձին տեսակների արտաքին առևտրի հետ կապված գործարքների իրականացման կարգ, որով նախատեսվում է լիցենզավորումը կամ արտաքին առևտրային գործունեությունը կարգավորող այլ վարչական միջոցների կիրառումը,

ինչպես նաև նշված ապրանքների մաքսային հսկողությունը եւ մաքսային ձեւակերպումը, որոնք տեղափոխվում են Կողմ հանդիսացող պետության կամ միասնական մաքսային տարածքից դուրս,

«գործադիր իշխանության լիազորված պետական մարմին»՝ Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության մարմին, որին լիցենզիա եւ (կամ) թույլտվություն տրամադրելու իրավունք է վերապահվել,

«արտաքին առևտրային գործունեության մասնակիցներ»՝ իրավաբանական անձինք եւ իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություններ, որոնք գրանցված են Կողմ հանդիսացող պետություններից որեւէ մեկում եւ ստեղծվել են այդ պետության օրենսդրությանը համապատասխան, ֆիզիկական անձինք, որոնք մշտապես կամ հիմնականում բնակվում են Կողմ հանդիսացող պետություններից որեւէ մեկի տարածքում եւ այդ պետության քաղաքացի են, կամ այդտեղ մշտապես բնակվելու իրավունք ունեն կամ գրանցված են այդտեղ որպես անհատ ձեռնարկատեր՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան,

«ապրանքների արտահանում»՝ ապրանքի դուրսհանումը Կողմ հանդիսացող պետության մաքսային տարածքից կամ միասնական մաքսային տարածքից երրորդ երկրների մաքսային տարածքներից՝ առանց վերաարտահանման պարտավորության,

«ոչ սակագնային կարգավորման միջոցներ»՝ ապրանքների արտաքին առևտրի կարգավորման միջոցների ամբողջություն, որը կիրառվում է տնտեսական բնույթի քանակական կամ այլ արգելքների ներմուծման միջոցով:

Հոդված 2

Ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների կիրառումը

1. Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների հետ առևտուր իրականացնելիս կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցները սույն Համաձայնագրի 3-6-րդ եւ 9-րդ հոդվածներում նշված սկզբունքների հիման վրա:

2. Ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների ներմուծման եւ կիրառման կարգը սահմանվում է Կողմերի առանձին համաձայնագրերով:

Հոդված 3

Քանակական սահմանափակումները

1. Երրորդ երկրների հետ առևտուր իրականացնելիս ապրանքների արտահանման եւ ներմուծման համար որեւէ քանակական սահմանափակում սահմանված չէ՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Բացառիկ դեպքերում կարող են սահմանվել՝

1) ապրանքների արտահանման արգելքներ կամ ժամանակավոր սահմանափակումներ ներքին շուկայում պարենային կամ այլ ապրանքների կրիտիկական պակասը կանխելու կամ նվազեցնելու նպատակով, որոնք կարելի է նշանակություն ունեն ներքին շուկայի համար,

2) գյուղատնտեսական կամ ջրակենսաբանական ռեսուրսների ներմուծման սահմանափակումներ, որոնք, անհրաժեշտության դեպքում, սահմանվում են ցանկացած տեսքով,

ա) կրճատելով հայրենական արտադրության նույնանման ապրանքի արտադրությունը կամ վաճառքը,

բ) կրճատելով հայրենական արտադրության ապրանքի արտադրությունը կամ վաճառքը, որը կարող է անմիջապես փոխարինվել ներմուծված ապրանքով, եթե հայրենական արտադրության նույնանման ապրանքը բավարար չափով չի արտադրվում,

գ) շուկայից հանելով հայրենական արտադրության նույնանման ապրանքի ժամանակավոր ավելցուկը՝ այն սպառողների որոշ խմբերին անվճար կամ շուկայական գներից ավելի ցածր գներով տրամադրելով,

դ) շուկայից հանելով հայրենական արտադրության ապրանքի ժամանակավոր ավելցուկը, որը կարող է անմիջապես փոխարինվել ներմուծված ապրանքով, եթե հայրենական արտադրության նույնանման ապրանքը բավարար չափով չի արտադրվում, այն սպառողների որոշ խմբերին անվճար կամ շուկայական գներից ավելի ցածր գներով տրամադրելով,

ե) սահմանափակելով անասնաբուծական ծագում ունեցող ապրանքների արտադրությունը, որն ամբողջությամբ կամ հիմնականում կախված է ներմուծված

ապրանքից, եթե հայրենական արտադրության նույնանման ապրանքը բավարար չափով չի արտադրվում:

Հոդված 4

Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքը

1. Արտաքին առևտրային գործունեության իրականացումը կարող է սահմանափակվել՝ ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք շնորհելով:

2. Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքն իրականացվում է լիցենզիայի հիման վրա:

3. Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք ունեցող՝ արտաքին առևտրային գործունեության մասնակիցները ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման գործարքներ են կնքում՝ հիմնվելով խտրականության բացառման սկզբունքի վրա եւ ղեկավարվելով միայն առևտրային նկատառումներով:

Հոդված 5

Լիցենզավորումը ապրանքների արտաքին առևտրի ոլորտում

1. Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորումը սահմանվում է հետևյալ դեպքերում՝

1) ապրանքների առանձին տեսակների արտահանման կամ ներմուծման քանակական ժամանակավոր սահմանափակումների ներդնում,

2) այն ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման թույլատրման կարգի կիրարկում, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ պետության, քաղաքացիների կյանքի եւ առողջության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքի, պետական կամ համայնքային գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների եւ բույսերի կյանքի կամ առողջության վրա,

3) ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքի շնորհում,

4) միջազգային պարտավորությունների կատարում:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման հիմք է հանդիսանում գործադիր իշխանության լիազորված պետական մարմնի կողմից տրվող լիցենզիան:

3. Լիցենզիայի բացակայությունը հիմք է հանդիսանում մաքսային մարմինների կողմից ապրանքների բացթողումը արգելելու համար:

4. Լիցենզավորման կանոնները սահմանվում են Կողմերի առանձին համաձայնագրով:

Հոդված 6

Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման վերահսկողությունը

Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման վերահսկողությունն իրականացվում է ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման թույլտվության տրամադրման միջոցով հետեւյալ պայմանների բավարարման դեպքում՝

1) թույլտվություն ստանալու ընթացակարգը պետք է հնարավորինս հեշտացվի, որպեսզի ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման գործընթացներն իրականացվեն առանց սահմանափակումների,

2) թույլտվությունները տրվում են արտաքին առեւտրային գործընթացի բոլոր մասնակիցներին՝ առանց որեւէ սահմանափակումների, գործադիր իշխանության պետական լիազոր մարմին ներկայացված գրավոր դիմումների հիման վրա,

3) թույլտվությունների տրամադրման դիմումները կարող են ներկայացվել աշխատանքային օրերին՝ մինչեւ ապրանքների մաքսային ձեւակերպումը,

4) թույլտվությունները պետք է տրամադրվեն դիմումը ներկայացնելու օրվանից հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 7

Ապրանքների արտաքին առևտրին վերաբերող միջոցները, որոնք սահմանվում են՝ ելնելով ազգային շահերից

1. Ապրանքների արտաքին առևտրի կարգավորման միջոցները կարող են սահմանվել, եթե դրանք՝

- 1) անհրաժեշտ են հասարակության բարոյական արժեքների կամ իրավակարգի պահպանման համար,
- 2) անհրաժեշտ են քաղաքացիների կյանքի կամ առողջության, շրջակա միջավայրի, կենդանիների եւ բույսերի կյանքի կամ առողջության համար,
- 3) վերաբերում են ոսկու կամ արծաթի արտահանմանը եւ (կամ) ներմուծմանը,
- 4) կիրառվում են մշակութային արժեքների կամ մշակութային ժառանգության պահպանման համար,
- 5) անհրաժեշտ են անվերականգնելի բնական ռեսուրսների սպառումը կանխելու համար եւ կիրառվում են միաժամանակ սահմանափակելով ներքին արտադրությունը կամ սպառումը՝ կապված անվերականգնելի բնական ռեսուրսների օգտագործման հետ,
- 6) կապված են հայրենական արտադրության նյութերի արտահանման սահմանափակման հետ ներքին մշակող արդյունաբերությունն այդ նյութերի բավարար քանակով ապահովելու նպատակով այն ժամանակահատվածներում, երբ կառավարության կողմից իրականացվող կայունացման նախագծի արդյունքում նման ապրանքների ներքին գինն ավելի ցածր է, քան համաշխարհային գինը,
- 7) անհրաժեշտ են ապրանքների ձեռքբերման կամ բաշխման համար ընդհանուր կամ տեղական մակարդակով դրանց պակասի դեպքում,
- 8) անհրաժեշտ են միջազգային պարտավորությունների կատարման համար,
- 9) անհրաժեշտ են պաշտպանության եւ անվտանգության ապահովման համար,
- 10) անհրաժեշտ են միջազգային պարտավորություններին չհակասող եւ մաքսային օրենսդրության կիրառմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, մտավոր սեփականության պաշտպանությանը վերաբերող իրավական ակտերի եւ այլ իրավական ակտերի կատարման ապահովման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցները չպետք է կիրառվեն, եթե դրանց իրականացումը կամայական կամ անհիմն խտրականության, ինչպես նաև ապրանքների արտաքին առևտրի ծածուկ սահմանափակման միջոց չէ:

Հոդված 8

Ապրանքների արտաքին առևտրի արգելման սահմանափակման հատուկ ձեւերը

1. Ապրանքների արտաքին առևտուրը կարող է սահմանափակվել այնպիսի միջոցներով, որոնց ընդունումն անհրաժեշտ է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն ընդունված միջազգային պատժամիջոցներին Կողմ հանդիսացող պետությունների մասնակցության համար, ինչպես նաև այն միջոցներով, որոնցով շեղում է կատարվում սույն Համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածների դրույթներից:

2. Ապրանքների արտաքին առևտուրը սահմանափակող միջոցները, ինչպես նաև այն միջոցները, որոնցով շեղում է կատարվում սույն Համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածների դրույթներից, կարող են սահմանվել արտաքին ֆինանսական դրության եւ վճարային հաշվեկշռի պահպանման նպատակով:

Հոդված 9

Ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառումը միասնական մաքսային տարածքում

1. Միասնական մաքսային տարածք ապրանքների ներմուծման եւ (կամ) այդ տարածքից դրանց արտահանման վերաբերյալ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման մասին որոշումներն ընդունվում են «Մաքսային միության Հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրով ստեղծված Մաքսային միության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից:

2. Սույն Համաձայնագրով նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման մասին որոշումների ընդունման Կողմերի լիազորությունները, Կողմ հանդիսացող պետությունների ղեկավարների որոշմամբ, կարող են ամբողջությամբ կամ մասամբ փոխանցվել Հանձնաժողովին մինչև Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածքի ստեղծումը:

Այդ դեպքում մաքսային տարածքներից ապրանքների ներմուծման եւ (կամ) այդ տարածքներից դրանց արտահանման վերաբերյալ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման մասին Հանձնաժողովի որոշումները կիրարկվում են Կողմերի կողմից:

3. Բացառիկ դեպքերում Կողմերը կարող են միակողմանիորեն սահմանել սույն Համաձայնագրով նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցներ առավելագույնը 6 ամիս ժամկետով՝ Հանձնաժողովին սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված լիազորությունները փոխանցելուց կամ միասնական մաքսային տարածք ստեղծելուց հետո:

Սույն կետի համաձայն ոչ սակագնային կարգավորման միջոցներ սահմանող Կողմը Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում մյուս Կողմերի կողմից նմանօրինակ միջոցների կիրառման հարցը, ինչպես նաեւ այդ Կողմերին տեղեկացնում է նման միջոցների սահմանման եւ կիրառման մասին:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջոցները չկիրառող Կողմերը անհրաժեշտ ջանքեր են գործադրում, որպեսզի կանխեն երրորդ երկրներից ապրանքների ներմուծումը այդ միջոցները կիրառող Կողմի պետության մաքսային տարածք կամ ապրանքների արտահանումը երրորդ երկրներ՝ շրջանցելով նշված միջոցները:

5. Կողմի կողմից, սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, երրորդ երկրներ հայրենական արտադրության ապրանքների արտահանման արգելման կամ սահմանափակման տեսքով ոչ սակագնային կարգավորման միջոցների սահմանման դեպքում, նշված միջոցները չկիրառող մյուս Կողմերը չեն թույլատրում այդ ապրանքների արտահանումը՝ առանց Կողմ հանդիսացող այդ պետության գործադիր իշխանության լիազորված պետական մարմնի կողմից տրված լիցենզիայի եւ (կամ) թույլտվության:

6. Սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն ոչ սակագնային կարգավորման միջոցներ կիրառող Կողմը անհրաժեշտ ջանքեր է գործադրում, որպեսզի ապահովվի սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերի դրույթների կիրառումը մյուս Կողմերի կողմից, ինչպես նաեւ վերջիններիս տեղեկություններ է տրամադրում ապրանքների մատակարարների, ապրանքների նույնականացման հատկանիշների, դրանք փոխադրելու իրեն հայտնի միջոցների մասին եւ այլ տեղեկություններ, որոնցով հնարավոր է բացահայտել այն ապրանքները, որոնց մասով սահմանվել են ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

7. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված լիազորությունները Հանձնաժողովին փոխանցելուց հետո Կողմերից որեւէ մեկի պետության գործադիր իշխանության լիազորված

պետական մարմնի կողմից տրված լիցենզիաները եւ (կամ) թույլտվությունները ճանաչվում են Կողմ հանդիսացող բոլոր մյուս պետությունների կողմից եւ Կողմ հանդիսացող բոլոր պետություններում նույն իրավական ուժն ունեն:

8. Միասնական մաքսային տարածքում ապրանքների արտաքին առևտրին վերաբերող ու ազգային շահերից բխող (7-րդ հոդված) միջոցների եւ ապրանքների արտաքին առևտրին առնչվող արգելքների ու սահմանափակումների հատուկ տեսակների (8-րդ հոդված) կիրառման կարգը, այդ թվում՝ դրանց միակողմանիորեն կիրառման կարգը, ինչպես նաեւ արտաքին առևտրին առնչվող այլ արգելքների ու սահմանափակումների կիրառման կարգը սահմանվում են առանձին համաձայնագրերով:

Հոդված 10

Բացառությունները

Սույն Համաձայնագիրը չի տարածվում արտահանման վերահսկմանը, տեխնիկական կարգավորմանը, սանիտարական, անասնաբուժական ու բուսասանիտարական պահանջների ու միջոցների, ինչպես նաեւ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառմանն առնչվող՝ Կողմերի հարաբերությունների վրա:

Հոդված 11

Վեճերի կարգավորումը

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, դրանք փոխանցվում են Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 12

Փոփոխությունները

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 13

Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի հունվարի 25-ին՝ մեկ բնօրինակից, ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեում, որը լինելով սույն Համաձայնագրի ավանդապա, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

(ստորագրություններ)